ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Ministry of Education, Science, Culture and Sport, Republic of Armenia
"NATIONAL CENTER OF FOLK MUSIC AND DANCE" NCSO

N 55 **07.05.2026թ.**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2026թ.ապրիլի 29-մայիսի 4

ԿԳՄՍ նախարարության և Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի միջև կնքված 16.04.2026 թ, ՄՇԴ-202-2026 Պայմանագրով ««Տաջիկստանի Դուշանբեում «Պարը մեզ միավորում է» միջազգային փառատոնին Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի «Ակունք» պետական ազգագրական համույթի հյուրախաղերի կազմակերպում»» ծրագրի շրջանակներում 2026 թվականի ապրիլի 29-ից մինչև մայիսի 3-ը Հայաստանի «Ակունք» պետական ազգագրական համույթն իմ ղեկավարությամբ ներկա գտնվեց Տաջիկստանի Հանրապետության մայրաքաղաք Դուշանբեում:

Այս ընդգրկմամբ Տաջիկստանում մեր առաջին փառատոնային մասնակցությունն էր, որն իր տեսակի մեջ եզակի էր, քանի որ միավորում էր ԱՊՀ երկրների արտիստներին՝ մշակութային բազմազանությունը ցուցադրելու համար: Փառատոնը համընկնում էր Տաջիկստանի պետական անկախության 35-ամյակի հետ և անցկացվում էր Տաջիկստանի Հանրապետության մշակույթի նախարարության ծրագրային պլանի համաձայն:

Հանդիսավոր բացումը կայացավ ապրիլի 30-ին, Տաջիկստանի Սադրիդին Այնիի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, որտեղ Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի «Ակունք» պետական ազգագրական համույթը ներկայացրեց ազգագրական և ավանդական պարեր՝ «Նարե», «12 ոտ պար» և «Քոչարի-Յարխուշտա»: Մասնակից երկրներն էին՝ Ռուսաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Ադրբեջանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: Համույթի մասնակցությունը փառատոնին արժանացավ բարձր գնահատականի՝ ընդգծելով հայկական ժողովրդական պարարվեստի միջազգային ճանաչումն ու արժեքը, մասնակից երկրների ստեղծած միջավայրի միջմշակութային փոխառնչությունները, ինչպես նաև հրաշալի առիթ էր խոսելու հայկական մշակույթի դարավոր ներկայության մասին: Որպես դրական արդյունք պետք է դիտել և այն, որ փառատոնը լուսաբանվեց միջազգային բարձր հեղինակություն ունեցող հարթակներով:
Արդյունքների շարքում պետք է դասել նաև մշակութային այս հանրույթի հետ կապերի հաստատումը և ամրապնդումը, որը հետագայում բազմապատիկ արդյունավետություն է բերում միջազգային համագործակցություններում:

Փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը կայացավ մայիսի 2-ին, ուր ներկա էր Տաջիկստանի մշակույթի նախարար Սաթորիյոն Մատլուբախոն Ամոնզոդան: Նրա կողմից համույթը պարգևատրվեց Տաջիկստանի Հանրապետության մշակույթի նախարարության դիպլոմով և մրցանակով՝ միջազգային փառատոնին ակտիվ և պտղաբեր մասնակցության

ք.Երևան, 0070, Վարդանանց 30 Vardanants 30, Yerevan, RA, 0070
Հեռ.՝ +374 10 300077, +374 33 300175 Tel: +374 10 300088, +374 33 300175
Էլ. հասցե՝ info@folkmusicdance.am Email: info@folkmusicdance.am

համար, նվիրված Տաջիկստանի Հանրապետության անկախության 35-ամյակին: Ավարտին նախարար Սաթորիյոն Ամոնզոդան և նախարարի տեղակալները ջերմագին ողջույններ փոխանցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին և նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանին: Տաջիկստանի կողմը շնորհակալություն հայտնեց Հայաստանի մասնակցությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար՝ միաժամանակ հույս հայտնելով, որ հայկական պատվիրակությունը կշարունակի ամեն տարի մասնակցել փառատոնին և հանդես գալ Տաջիկստանում:
Հանդիպման ընթացքում նախարարին հանձնեցի հայկական հուշանվերներ, որոնց թվում էր հայկական ազգային նվագարան՝ դուդուկը: Կարևորելով նման ձևաչափերի շարունակականությունը՝ կողմերը հույս հայտնեցին, որ փառատոնի շրջանակում ձևավորված միջազգային կապերը կնպաստեն հայկական կատարողական արվեստի տարածմանը և միջազգայնացմանը:

Փառատոնի շրջանակներում Մալիկա Սաբիրովայի անվան հանրապետական պարարվեստի քոլեջում կայացավ գիտաժողով՝ «Գաֆֆոր Վալամատզադեի ժառանգությունը համաշխարհային պարարվեստի մշակույթի համատեքստում. ավանդույթներ, նորարարություն և շարունակականություն» թեմայով: Գիտաժողովին մասնակցում էին Տաջիկստանի Հանրապետության մշակույթի նախարարության ղեկավարությունը, ինչպես նաև մասնակից երկրների պատվիրակությունները:
Գիտաժողովից հետո հանդիպում ունեցա մշակույթի փոխնախարար Ֆարիդուն Բոբոզոդայի հետ: Քննարկվեցին երկկողմ ծրագրեր, ձևավորվեց երկարաժամկետ համագործակցության տեսլական:

Փառատոնի մասնակցությունից բացի, մայիսի 1-ին Հայաստանի «Ակունք» պետական ազգագրական համույթը հյուրընկալվեց Մալիկա Սաբիրովայի անվան հանրապետական պարարվեստի քոլեջում, որտեղ անցկացրեց հայկական ազգագրական պարերի վարպետության դաս: Միջոցառմանը մասնակցեցին քոլեջի ուսանողները, ժողովրդական պարի դասախոսները, ինչպես նաև փառատոնին մասնակցող այլ երկրների պատվիրակությունների ներկայացուցիչներ: Վարպետության դասի ընթացքում ներկայացվեցին հայկական ավանդական պարարվեստի առանձնահատկությունները, շարժման լեզուն, ռիթմական կառուցվածքն ու բեմական արտահայտչամիջոցները: Դասը վերածվեց մշակութային կենդանի երկխոսության՝ հնարավորություն տալով մասնակիցներին ոչ միայն ծանոթանալու հայկական պարային ժառանգությանը, այլև անմիջականորեն մասնակցելու և զգալու դրա էներգետիկան:

Տաջիկստանի Հանրապետությունից վերադարձի ճանապարհին կանգառ ունեցանք Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում, որտեղ այցելեցինք ՀԱԵ Ռուսաստանի և Հայոց թեմի Եկատերինբուրգի Սուրբ Հովհաննես Կարապետ եկեղեցի: Տեղի հոգևոր առաջնորդ Տեր Արիստակես Հովհաննիսյանի հետ քննարկեցինք հայ մշակույթի պահպանման և սփյուռքում հայկական ինքնության ամրապնդման կարևորությունը: Տեր Արիստակես Հովհաննիսյանի ուղեկցությամբ պատվիրակությունն այցելեց նաև Եկատերինբուրգի հայորդաց տուն, որտեղ ծանոթացանք իրականացվող գործունեությանը: Այցի ընթացքում ներկայացվեցին ազգային նվագարանների՝ քանոնի և դհոլի դասարանները, հայկական պարախմբերի և երգի

խմբակների աշխատանքը: Հանդիպումը ևս մեկ անգամ ընդգծեց սփյուռքում հայկական մշակութային կյանքի ակտիվությունը և ազգային արժեքների փոխանցման կարևոր առաքելությունը:

Հայաստանի Հանրապետության համար խաղաղության օրակարգին տեր կանգնելու այս կարևոր օրերին փառատոնի մասնակցությունը ևս մեկ դիվանագիտական հարթակ էր, որը ստեղծեց նոր դինամիկա: